# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**1 սեպտեմբերի 2025 թվականի № 355-Ա**

## ՎԱՍԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Վասակ Վարդանյանի* 2025 թվականի սեպտեմբերի 1-ի № Ն/1117-2025 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Վասակ Վարդանյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից յոթ աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 2-ից 10-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 1**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 սեպտեմբերի 2025 թվականի № 356-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի № 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունվարի 8-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի 2025-2027 թվականների ռազմավարական և 2025 թվականի տարեկան ծրագրերը վավերացնելու մասին»* № 4-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման № 2 հավելվածի 22-րդ կետի ***«01/07/2025»*** և ***«31/09/2025»*** թվերը համապատասխանաբար փոխարինել ***«01/10/2025»*** և ***«05/12/2025»*** թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 3**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 սեպտեմբերի 2025 թվականի № 357-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի № 244-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հուլիսի 1-ի *«2025 թվականի երրորդ եռամսյակի աուդիտորական առաջադրանքներ իրականացնելու մասին»* № 244-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 7-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 3**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 սեպտեմբերի 2025 թվականի № 358-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 14-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կապուտանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 4**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ու Մ

**4 սեպտեմբերի 2025 թվականի № 359-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԲՋՆԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 17-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** **Հ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 4**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 սեպտեմբերի 2025 թվականի № 360-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԱՄՈՒՍԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 20-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժնին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** **Հ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 4**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 սեպտեմբերի 2025 թվականի № 361-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 24-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժնին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 4**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

---

**5 սեպտեմբերի 2025 թվականի № 362-Ա**

## ԳԱՅԱՆԵ ԳՈՐԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Գայանե Գորգյանի* 2025 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Զորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Գայանե Գորգյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 10-ը ներառյալ:

2. ***Գայանե Գորգյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Զորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Լյուդմիլա Խոցանյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

**Հ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 5**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 սեպտեմբերի 2025 թվականի № 363-Ա**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և «Տարածքային կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան, Հրազդան, Չարենցավան, Նոր Հաճըն և Գառնի համայնքների բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 17 քաղաքացիներին հատկացնել՝ 580.000 (հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն՝ հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 9**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի № 363-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| Հ/հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ալլա Կորնևա | Չարենցավան համայնք, 9-րդ թաղամաս, 36 շենք, 6 բնակարան | 20 000 | |
| 2 | Լալա Գրիգորյան | Չարենցավան համայնք, 9-րդ թաղամաս, 36 շենք, 29 բնակարան | 20 000 | |
| 3 | Մարինե Դավթյան | Չարենցավան համայնք, 3-րդ թաղամաս, 20 շենք, 33 բնակարան | 30 000 | |
| 4 | Աշխեն Ասլանյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 17 շենք, 3 բնակարան | 20 000 | |
| 5 | Արմեն Հայրապետյան | Հրազդան համայնք, Շահումյան փողոց, 188 բնակարան | 20 000 | |
| 6 | Գենյա Նահապետյան | Հրազդան համայնք, Կենտրոն փողոց, 42 շենք, 18 բնակարան | 30 000 | |
| 7 | Նոնա Հարությունյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 27 շենք, 6 բնակարան | 50 000 | |
| 8 | Սոնյա Հարությունյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 27 շենք, 7 բնակարան | 20 000 | |
| 9 | Վլադիկ Հակոբյան | Հրազդան համայնք, Կենտրոն, 45 շենք, 32 բնակարան | 20 000 | |
| 10 | Գալինա Հայրապետովա | Արզական համայնք, Դարանի փողոց, 8 շենք, 11 բնակարան | 20 000 | |
| 11 | Հերմինե Բաղդասարյան | Արզական համայնք, 6–րդ Միկրոշրջան, 5 շենք, 2 բնակարան | 30 000 | |
| 12 | Գայանե Վարդանյան | Նոր Հաճըն համայնք, Սպորտային փողոց, 2 շենք, 9 բնակարան | 20 000 | |
| 13 | Լյուսյա Պետրոսյան | Չարենցավան համայնք, 10-րդ թաղամաս, 1 շենք, 2 բնակարան | 20 000 | |
| 14 | Արտյոմ Մկրտչյան | Գառնի համայնք, Թ.Թորոսյան փողոց, 6 բնակարան | 200 000 | |
| 15 | Թամար Առաքելյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 72 շենք, 7 բնակարան | 20 000 | |
| 16 | Իրինա Քոչարյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 23 շենք, 20 բնակարան | 20 000 | |
| 17 | Սամվել Հակոբյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 42 շենք, 36 բնակարան | 20 000 | |
| **Ընդամենը** | | | **580 000** | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 սեպտեմբերի 2025 թվականի № 364-Ա**

## ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Արամ Խաչատրյանի* 2025 թվականի սեպտեմբերի 8-ի № 76 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Պարոնյանի անվան № 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Արամ Խաչատրյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից յոթ աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 18-ից 26-ը ներառյալ:

2. ***Արամ Խաչատրյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Պարոնյանի անվան № 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ ***Մերա Պետրոսյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 9**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 սեպտեմբերի 2025 թվականի № 365-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 11-րդ կետում ***«Կարինե Ղարիբյան»*** բառերը փոխարինել ***«Մարգարիտա Աբելյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 9**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 սեպտեմբերի 2025 թվականի № 368-Ա**

## ՎԱՍԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասի և հիմք ընդունելով *Վասակ Վարդանյանի*՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ի № Ն/1148-2025 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Վասակ Վարդանյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ յոթ օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ից 17-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 10**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2025 թվականի № 369-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՄՐԳԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 26-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժնին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 11**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2025 թվականի № 370-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԱԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի նոյեմբերի 28-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժնին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 11**
**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2025 թվականի № 371-Ա**

### ԳՈՀԱՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՄԱՐԻՍԻ ԱԶԱՏ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի մոտ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին *Գոհար Մկրտչյանի* հետ անցկացրած հարցազրույցը՝ **որոշում եմ.**

1. ***Գոհար Անուշավանի Մկրտչյանին*** 2025 թվականի սեպտեմբերի 11-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 11-ի *«Հրայր Սարգսյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխօրեն նշանակելու մասին»* № 330-Ա որոշման 3-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 11**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2025 թվականի № 372-Ա**

## ՎԵՆԵՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Վեներա Հովհաննիսյանի* 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վեներա Հովհաննիսյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից 26-ը ներառյալ:

2. ***Վեներա Հովհաննիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Անահիտ Սարգսյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 12**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 սեպտեմբերի 2025 թվականի № 373-Ա**

## ՍԵՐՅՈԺԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Սերյոժա Մկրտչյանի* 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 15 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Սերյոժա Մկրտչյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ չորս օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 26-ը ներառյալ:

2. ***Սերյոժա Մկրտչյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Լիաննա Գրիգորյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 17**
**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 սեպտեմբերի 2025 թվականի № 374-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի ԹԻՎ 558 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Սերգեյ Եղիշի Հարությունյանի ներկայացուցիչ Նաիրա Ալբերտի Թորոսյանի 2025 թվականի օգոստոսի 29-ի դիմումը և դիմումին կից ներկայացված անձը հաստատող փաստաթղթերը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի օգոստոսի 04-ի *«Բյուրեղավան համայնքի բնակիչ Լուսիկ Օհանի Հարությունովայի յոթ անձից բաղկացած ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարան հատկացնելու մասին»* թիվ 558 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) նախաբանում, 1-ին կետում և 3-րդ կետի «ա» ենթակետում ***«Լուսիկ»*** բառից հետո լրացնել ***«Օհանի»*** բառը,

2) 3-րդ կետի «բ» ենթակետում ***«Եղիշ»*** բառից հետո լրացնել ***«Կարապետի»*** բառը,

3) 3-րդ կետի «գ» ենթակետում ***«Լաուրա»*** բառից հետո լրացնել ***«Եղիշի»*** բառը,

4) 3-րդ կետի «դ» ենթակետում ***«Սերգեյ»*** բառից հետո լրացնել ***«Եղիշի»*** բառը,

5) 3-րդ կետի «ե» ենթակետում ***«Օֆելյա»*** բառից հետո լրացնել ***«Ստեփանի»*** բառը,

6) 3-րդ կետի «զ» ենթակետում ***«Էրիկ»*** բառից հետո լրացնել ***«Սերգեյի»*** բառը,

7) 3-րդ կետի ***«դ/ Հարությունյան Վալերիկ»*** բառերը փոխարինել ***«է/ Հարությունյան Վալերիկ Սերգեյի»*** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 17**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 սեպտեմբերի 2025 թվականի № 375-Ա**

## ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Արմինե Միքայելյանի* 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 71 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Արմինե Միքայելյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 22-ից 26-ը ներառյալ:

2. ***Արմինե Միքայելյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Լուսինե Ասլիջյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** — **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 18**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 սեպտեմբերի 2025 թվականի № 376-Ա**

## ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № ԴԽ/16/31797-2025 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյանին*** 2025 թվականի սեպտեմբերի 19-ին, մեկ օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերին առնչվող հարցերի քննարկմանը մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 18**
**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 սեպտեմբերի 2025 թվականի № 377-Ա**

### ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 1-ին մասի 2-րդ պարբերության, 3-րդ մասի և հիմք ընդունելով *Սերիա* **№** ***13431*** *անաշխատունակության թերթիկը*՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Աննա Մուրադյանին*** տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ 140 օր *(70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության)* 2025 թվականի սեպտեմբերի 1-ից 2026 թվականի հունվարի 18-ը ներառյալ:

2. ***Աննա Մուրադյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սիմա Ղափլյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2025 թվականի սեպտեմբերի 1-ից* ծագած հարաբերությունների վրա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 18**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 սեպտեմբերի 2025 թվականի № 378-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի № 2 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 13-րդ կետում ***«Աիդա Հովհաննիսյան»*** բառերը փոխարինել ***«Երանուհի Գևորգյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 18**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 սեպտեմբերի 2025 թվականի № 379-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բջնիի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի № 1 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 4-րդ կետում ***«Մարինե Ղազարյան»*** բառերը փոխարինել ***«Անուշ Վարդանյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բջնիի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 19**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**19 սեպտեմբերի 2025 թվականի № 380-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աղավնաձորի Ջ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 1 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 6-րդ կետում ***«Ջենֆերա Բաղդասարյան»*** բառերը փոխարինել ***«Արփինե Հարությունյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աղավնաձորի Ջ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 19**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**19 սեպտեմբերի 2025 թվականի № 381-Ա**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և «Տարածքային կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնու, Հրազդան, Չարենցավան, Ակունք և Գառնի համայնքների բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 13 քաղաքացիներին հատկացնել՝ 490.000 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն՝ հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 19**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 19-ի № 381-Ա որոշման

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| Հ/հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Անահիտ Խաչատրյան | Հրազդան համայնք, Կենտրոն, 84 շենք, 48 բնակարան | 40 000 | |
| 2 | Անիկ Սահակյան | Հրազդան համայնք, Կենտրոն, 83 շենք, 309 բնակարան | 20 000 | |
| 3 | Անուշիկ Մելքոնյան | Հրազդան համայնք, Երևանյան փողոց, 8 շենք, 25 բնակարան | 60 000 | |
| 4 | Արթուր Հակոբյան | Հրազդան համայնք, Կենտրոն, 87 շենք, 532-33 բնակարան | 40 000 | |
| 5 | Արման Բաղդասարյան | Հրազդան համայնք, Ջրառատ թաղամաս, 498 բնակարան | 20 000 | |
| 6 | Նարինե Կարապետյան | Հրազդան համայնք, Միկրոշրջան, 207 շենք, 22 բնակարան | 30 000 | |
| 7 | Նինել Այվազյան | Հրազդան համայնք, Սպանդարյան փողոց, 16 շենք, 20 բնակարան | 60 000 | |
| 8 | Ռուզաննա Սաղաթելյան | Հրազդան համայնք, Ջրառատ թաղամաս, 168 բնակարան | 30 000 | |
| 9 | Աստղիկ Վասիլյան | Գառնի համայնք, Շահումյան փողոց, 38 բնակարան | 50 000 | |
| 10 | Կարեն Մկրտչյան | Արզական համայնք, 2-րդ փողոց, 29 բնակարան | 20 000 | |
| 11 | Արևհատ Օսիպյան | Չարենցավան համայնք, 7-րդ թաղամաս, 18 շենք, 13 բնակարան | 20 000 | |
| 12 | Արմենուհի Խաչատրյան | Չարենցավան համայնք, 6-րդ թաղամաս, 4 շենք, 23 բնակարան | 50 000 | |
| 13 | Կարեն Սորսումատյան | Ակունք համայնք, գ. Կոտայք | 50 000 | |
| **Ընդամենը** | | | **490 000** | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 սեպտեմբերի 2025 թվականի № 382-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշման № 2 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի № 533-Ա որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 7.2.1 կետը. **որոշում եմ՝**

1. ***2025 թվականի սեպտեմբերի 26-ին՝*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈւ) «Բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների ու հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը անտառային խոշոր հրդեհի դեպքում» թեմայով:

2. Նշանակել շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Կոտայքի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Կոտայքի ՄՓՎ) պետ, փրկարար ծառայության գնդապետ *Գևորգ Սեդրակյանին*:

3. Հաստատել՝

1) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն № 1 հավելվածի

2) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն № 2 հավելվածի

3) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն № 3 հավելվածի

4) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն № 4 հավելվածի

5) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը՝ համաձայն № 5 հավելվածի

6) 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության սխեման՝ համաձայն № 6 հավելվածի:

4. Շտաբային ուսումնավարժության անցկացմանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների և բնակչության տարահանման հանձնաժողովներին,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հետևյալ վարչությունների ղեկավար կազմին՝

ա. Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,

բ. Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն,

գ. Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

դ. Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն,

ե. Ֆինանսական վարչություն,

զ. Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչներին,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզի պարեկային ծառայության և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներին,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարին:

5. Շտաբային ուսումնավարժության ացնկացմանը հրավիրել՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ու Ծաղկաձորի անտառպետության ներկայացուցիչներին:

6. Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ *Գևորգ Սեդրակյանին.*

1) մինչև 2025 թվականի սեպտեմբերի 18-ը մշակել և ներկայացնել հաստատման շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը.

2) համաձայն հաստատված շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի ժամկետների իրականացնել հետևյալ միջոցառումները՝

ա. ապահովել շտաբային ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի մշակումը, համաձայնեցումը և հաստատումը,

բ. կազմակերպել շտաբային ուսումնավարժությանը ներգրավված պաշտոնատար անձանց և ներգրավված ուժերի նախապատրաստումը,

գ. ապահովել շտաբային ուսումնավարժության մասնակիցների միջև փոխհամագործակցությունը,

դ. կազմակերպել Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի մայիսի 14-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման № 1 հավելվածի, «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի № 8 հավելվածի, «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ի և համապատասխան այլ պլանների ճշգրտումները,

ե. «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի ճշգրտումը,

զ. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Աղետների ռիսկի կառավարման պլան»-ի ճշգրտումը,

է. Շտաբային ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել *2025 թվականի սեպտեմբերի 25-ին:*

7. Շտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել թեմային առնչվող համապատասխան իրավական ակտերը,

2) պատրաստ լինել զեկուցելու շտաբային ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշման մասին իրազեկել ըստ առնչության:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վասակ Վարդանյանին*:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 22**
**ք. Հրազդան**

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման

ԿԱԶՄ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Գ. Սեղրակյան – ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ, ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ

2. ՇՈՒ խաղարկման խումբ.

1) խմբի ղեկավար - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ, փրկարար ծառայության փոխգնդապետ Արման Ճաղարյան,

2) խմբի անդամ - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ԲՊԲ ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության մայոր Գեղամ Ղազարյան,

3) խմբի անդամ - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԿ) ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության լեյտենանտ Նորիկ Ղազարյան.

3. ՇՈՒ վերլուծության նախապատրաստման և ամփոփման խումբ.

1) խմբի ղեկավար - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետի տեղակալ, փրկարար ծառայության փոխգնդապետ Ստեփան Ստեփանյան,

2) խմբի անդամ - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ԲՊԲ ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության փոխգնդապետ Գագիկ Պետրոսյան,

3) խմբի անդամ - ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության մայոր Նորիկ Ասրյան:

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

| ՀՀ ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետները | Պատասխանատու, կատարողներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Փաստաթղթերի մշակում** | | | | |
| 1. | Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման վայր, մտահղացում, անցկացման կարգ | Մինչև 19.09.2025թ. | ՇՈՒ ղեկավար, ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ | |
| 2. | ՇՈՒ մտահղացման սխեմայի մշակում | Մինչև 19.09.2025թ. | ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ | |
| 3. | ՇՈՒ մտահղացման բացատրագրի մշակում | Մինչև 22.09.2025թ. | | |
| 4. | ՇՈՒ անցկացման պլանի մշակում | Մինչև 23.09.2025թ. | | |
| 5. | ՇՈՒ իրավիճակի զարգացման պլանի մշակում | Մինչև 23.09.2025թ. | | |
| | ՇՈՒ փաստաթղթերի համաձայնեցում | Մինչև 24.09.2025թ. | | |
| 11. | ՇՈՒ փաստաթղթերի հաստատման ներկայացում | Մինչև 25.09.2025թ. | | |
| **Ուսուցանվողների նախապատրաստումը** | | | | |
| 17. | ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում մասնակիցներին | Մինչև 25.09.2025թ. | ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ | |
| 19. | «Արտակարգ իրավիճակներում ՀՀ Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի, «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում ՀՀ Կոտայքի մարզի գործելու պլան»-ի և համապատասխան այլ պլանների ճշգրտում | | | |
| **Ուսումնամեթոդական բազայի նախապատրաստում** | | | | |
| 24. | Գրենական պիտույքների ապահովում | Մինչև 25.09.2025թ. | ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ | |

**ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ, փրկարար ծառայության գնդապետ Գ. Սեդրակյան**

**Հավելված № 3**
**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի**
**2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման**

**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**
**2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ**

***Թեման՝*** «Բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների ու հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը անտառային խոշոր հրդեհի դեպքում»:

*Ուսումնական նպատակները՝*

1) ստուգել և կատարելագործել մասնակիցների ունակությունները անտառային խոշոր հրդեհի դեպքում՝ բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործում,

2) ստուգել ՀՀ Կոտայքի մարզպետի 14.05.2024թ.-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման՝ հավելված № 1 «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի, հավելված № 8 «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ի և համապատասխան այլ պլանների իրատեսությունը,

3) ստուգել «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի իրատեսությունը,

4) ստուգել «ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման պլան»-ի իրատեսությունը,

5) կատարելագործել կառավարման մարմինների ղեկավար կազմի հմտությունները,

6) կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների, ծառայությունների և համապատասխան կազմակերպությունների միջև:

*ՇՈՒ մասնակիցների կազմը՝*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների և բնակչության տարահանման հանձնաժողովներ,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հետևյալ վարչությունների ղեկավար կազմ՝

ա) Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն

բ) Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն

գ) Ֆինանսական վարչություն

դ) Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն

ե) Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն

զ) Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչներ,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզի պարեկային ծառայության և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներ,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար

6) ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ու Ծաղկաձորի անտառպետության ներկայացուցիչներ:

*Անցկացման ժամանակը*՝ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև 16:00-ն:

*Անցկացման վայրը*՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճ (հասցե՝ ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս վարչական շենք):

***Ելակետային տվյալները.***

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա, տարածքը կազմում է 2076կմ$^2$: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է: Մարզի բնակչությունը կազմում է 320216 մարդ:

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ազատը ունեն ոռոգիչ նշանակություն:

Կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C-ից մինչև 2.5°C:

Մարզի անտառային տարածքները պատկանում են՝

– «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին՝ 22789 հա (Ծաղկաձորի անտառպետություն-4792 հա, Մեղրաձորի անտառպետություն-6771 հա,

Արզականի անտառպետություն-7834 հա, Բուժականի անտառպետություն-1832 հա, Արզնիի անտառպետություն-1560 հա):

- «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր - 5202,86 հա,
- ինչպես նաև մարզում անտառային հատվածներ ունեն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառպարկ»-ը՝ 423,8 հա և «Էրեբունի» պետական արգելոցը՝ 118,75 հա:

Անտառային հրդեհների առաջացման առավել հավանական տարածքները հիմնականում հանդիսանում են հանգստյան գոտիները, ինչպես նաև բնակավայրերին մոտ գտնվող անտառաշերտերը (Հրազդանի, Ծաղկաձորի, Մարմարիկի, Աղավնաձորի, Քաղսիի, Հանքավանի, Արտավազի, Մեղրաձորի, Արզականի, Բջնիի, Թեղենիքի, Բուժականի, Արզնիի, Նուռնուսի, Գետամեջի, Կապուտանի, Հացավանի, Զորաղբյուրի, Գեղարդի անտառաշերտերը): Այստեղ աճում են կաղնի, հացենի, թխկի, թեղի, սզնի, ծիրանենի, խնձորենի, տանձենի, ուռի, կեչի, արոսենի, լորենի և այլ տեսակի ծառեր, թփուտներ:

Ծաղկաձոր քաղաքը գտնվում է Թեղենիս լեռնաշղթայի արևելյան լանջին: Բնակչության թիվը՝ 1826 մարդ: Կլիման մեղմ է, առողջարար: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1841մ բարձրության վրա: Քաղաքը շրջապատված է անտառով: Քաղաքում առկա են եկեղեցիներ, մի շարք պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցներ, հատվածներ, առկա են՝ ճոպանուղի, բազմաթիվ հյուրանոցներ, հյուրատներ, հանգստի և ժամանցի վայրեր, մարզական կենտրոններ և այլն, զբոսաշրջության համար խոշոր կենտրոն է:

Ծաղկաձորի անտառային հատվածում գործում եմ հյուրանոցներ, հյուրատներ, հանգստի և ժամանցի վայրեր, հարևանությամբ գտնվում են Բջնի, Արզական, Սոլակ, մարմարիկ և այլ բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող սարերը, ինչպես նաև Արզակաի (Աղվերանի) անտառը, որը Ծաղկաձորի անտառից բաժանվում է բուսածածկ/խոտածածկ սարերով (ուղիղ գծով՝ մոտ 1,5-2կմ հեռավորության վրա):

***Սպևեղծված իրավիճակը.***

Ըստ հիդրոօդերևութաբանական ծառայությունից ստացված տվյալների առաջիկա 1 ամսվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում պահպանվելու է նորմայից բարձր ջերմաստիճան, որը կարող է խոշոր հրդեհների առաջացման պատճառ հանդիսանալ:

2025թ.-ի սեպտեմբեր ամսին՝ հարավից ներթափանցած տաք օդային զանգվածների ներխուժմամբ պայմանավորված, հանրապետությունում գրանցվեց բարձր ջերմաստիճան: Ըստ օդերևութաբանական կանխատեսումների՝ տեղումներ չեն սպասվում և մինչև ամսվա վերջ կպահպանվի բարձր ջերմային ֆոն, սպասվում է նաև քամու ուժգնացում: Հանրապետության մի շարք մարզերում հրդեհային իրավիճակը բարդանում է:

ՀՀ ՆԳՆ ՓԾ ստորաբաժանումների գերակշռող մասը ներգրավված են բուսածածկ տարածքների հարյուրավոր հրդեհների մարմանը:

Ստեղծված իրավիճակի վերլուծումը հանգեցնում է այն եզրահանգմանը, որ մարզի տարածքում մեծ է բուսածածկ և անտառային տարածքներում խոշոր հրդեհների առաջացման հավանականությունը:

Հրդեհ է բռնկվել նաև ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ծաղկաձորի անտառպետության տարածքում: Չոր խոտածածկ տարածքներում բռնկված հրդեհը տարածվելով հասել է անտառաշերտին, այրվում է բուսածածկույթ, թփուտներ և ծառեր: Տեղի ուժերով (անտառի աշխատակիցների, էկոպարեկային ծառայության կողմից) կազմակերպվել է հրդահաշիջման աշխատանքներ:

**Անցկացման կարգը.**

Ոխումնավարժությունը անցկացվում է 2 փուլով.

**I փուլ - «Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում: Հետախուզության կազմակերպում, իրավիճակի գնահատում և հրդեհի արձագանքման կազմակերպում».**

*Փուլի տևողությունը՝*

*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև աշխատանքների ավարտը,

*աստղաբաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև 13:00-ն:

*Մասնակի իրավիճակը.*

Նախնական տվյալներով՝ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ՃԿԿ «911» ահազանգման կենտրոնում՝ Ծաղկաձոր, Հրազդան Մեղրաձոր բնակավայրերի բնակիչներից ահազանգեր են ստացվում այն մասին, որ հրդեհ է բռնկվել Ծաղկաձորի անտառում, այրվում է բուսածածկույթ, թփուտներ, ծառեր:

Թեև հրդեհի տարածման մի ուղղությունը տեղի ուժերով (անտառի աշխատակիցների, էկոպարեկային ծառայության կողմից) հաջողվել է կասեցնել, սակայն առանձին դժվարանցանելի հատվածներում դեռևս նկատվում են այրվող և ծխացող տարբեր օջախներ:

*Ոխումնական հարցերը.*

1) մասնակիցների ազդարարում, հավաք և խնդրադրում,

2) հրդեհի արձագանքման և հետախուզության կազմակերպում, իրականացում, իրավիճակի գնահատում:

*Ոխուցանվողների գործողությունները.*

Էկոպարեկային ծառայության հերթապահի կողմից՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ՃԿԿ «911» ահազանգման կենտրոնում, հաղորդում է փոխանցվում այն մասին, որ անտառի տարածքում նկատվում են տարբեր օջախներով հրդեհներ, այրվում է բուսածածկույթ, թփուտներ և ծառեր: Տեղի ուժերով փորձում են կասեցնել տարածումը, սակայն այն տարածվում է մի քանի ուղղություններով:

Քամու առկայությամբ պայմանավորված կրակը արագ տարածվում է՝ ընդգրկելով մոտ 30 հա մակերեսով տարածք:

ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի կրտսեր հրահանգիչը, ահազանգը ստանալուն պես, կատարվածի մասին զեկուցում է ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետին, վերջինս էլ զեկուցում է ՀՀ ՆԳՆ ՓԾ տնօրենին, ՀՀ Կոտայքի մարզպետին: ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետի կարգադրությամբ զուգահեռաբար կազմակերպվում և իրականացվում է արձագանքում՝ հրդեհ բարդության «Թիվ 2» կանչով, համապատասխան հրշեջ-փրկարարական ջոկատների և Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի կողմից:

ՇՈՒ ղեկավարի կողմից ստանալով համապատասխան կարգադրություն՝ ՇՈՒ ղեկավարի տեղակալը կազմակերպում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակների հանձնաժողովին և համապատասխան ծառայությունների/կազմակերպությունների ու ուժերի ղեկավար կազմի, համապատասխան համայնքների ղեկավարների ազդարարումը, որն իրականացվում է ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխերի կողմից:

Ստանալով հավաքի ազդանշանը մասնակիցները ներկայանում են Կոտայքի մարզպետի աշխատակազմ՝ խնդրադրման: ՇՈՒ ղեկավարի տեղակալը՝ ազդարարման և հավաքի արդյունքների մասին զեկուցում է ՇՈՒ ղեկավարին:

Ժամը 10:00-ին ՇՈՒ ղեկավարը ընդունում է ՇՈՒ ղեկավարի տեղակալի զեկույցը՝ խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ, այնուհետև մասնակիցներին ներկայացնում է ստեղծված իրավիճակը, որից հետո խնդիր է դնում մասնակիցներին՝ անտառային խոշոր հրդեհների դեպքում իրավիճակի բացահայտման, հետախուզության, հրդեհի արձագանքման, հրդեհաշիջման աշխատանքների, ինչպես նաև բնակչության, կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Համաձայն ստեղծված իրավիճակի՝ ըստ գործունեության ոլորտների, մասնակիցները առաջարկություններ են ներկայացնում հետախուզության, հրդեհաշիջման, բնակչությանը և կենդանիներին ու նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

Մասնակիցների կողմից՝

- հրդեհաշիջման, բնակչությանը, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ առաջարկում են՝ գործողության մեջ դնել՝ ՀՀ Կոտայքի մարզպետի 14.05.2024թ.-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման՝ հավելված № 1 «Արտակարգ

իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը, հավելված № 8 «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ը, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» համատեղ հրամանի պահանջների համաձայն մշակված՝ «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ը՝ օգտագործելով առկա ուժերն ու միջոցները,

- անհրաժեշտության դեպքում համապատասխան համայնքների բնակչությանը ստեղծված իրավիճակի և վարվելակերպի կանոնների մասին իրազեկելու նպատակով օգտագործել ազդարարման էլեկտրաշչակները, հրդեհաշիջման աշխատանքներում ընդգրկել նաև Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի անձնակազմին, ինչպես նաև համապատասխան բնակավայրերի կամավոր խմբերին/կազմավորումներին.

- ճշտում են հրդեհի մակերեսը և համապատասխան միջոցառումների համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները,

- համապատասխան աշխատանքների, միջոցառումների իրականացման համար ստեղծում են աշխատանքային խմբեր.

Հետախուզության տվյալների հիման վրա գնահատում են իրավիճակը, որոշում են՝

- աշխատանքների ծավալը, կատարման կարգը և հաջորդականությունը.

- հրդեհաշիջման աշխատանքների իրականացմանը խոչընդոտող գործոնները,

- ուժերի և միջոցների վիճակը, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժերի, ինժեներական տեխնիկայի ներգրավումն ու տեսակները,

- համաձայնեցնում են աշխատանքների կատարման ժամանակը, ներգրավված ուժերի և խմբերի/կազմավորումների գործողությունները,

- որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև:

Մասնակիցները՝ ըստ ոլորտների, ներկայացնում են զեկույցներ՝ հետախուզության արդյունքների, կատարված աշխատանքների վերաբերյալ: ՇՈՒ ղեկավարը ունկնդրում է զեկույցները:

Ժամը 11:30-12:30-ը ՇՈՒ ղեկավարը իրականացնում է իրավիճակի խաղարկում՝ ըստ իրավիճակի զարգացման պլանի տալիս է N 1 և N 2 միջանկյալները ու հսկում ուսուցանվողների կողմից իրականացվող գործողությունները և ունկնդրում զեկույցները:

Ժամը 12:30-13:00-ն ՇՈՒ առաջին փուլի արդյունքների ամփոփում:

Ժամը 13:00-14:00-ն հայտարարվում է ընդմիջում:

**II փուլ - «Հրդեհաշիջման աշխատանքների, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որոշումների ձևակերպում»:**

*Փուլի տևողությունը՝*

*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև աշխատանքների ավարտը,

*աստղաբաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև 16:20-ը:

***Մասնակի իրավիճակը.***

Անօդաչու թռչող սարքերի օգնությամբ հաջողվել է պարզել հրդեհի տարածման ուղղությունները: Քամու ուժգնացման հետևանքով կրակը ինտենսիվ տարածվում է հարավ-արևմտյան ուղղությամբ՝ համնելով հարակից բլուրների, սարերի խիտ անտառածածկ հատվածներ: Առաջացել են խիտ ծխապատ գոտիներ: Անտառածածկ հատվածում նկատվում են արշավախմբեր և կենդանիներ:

Վտանգված են անտառածածկ հատվածում գտնվող մարդկանց կյանքն ու առողջությունը, ոչնչանում են տարբեր բուսատեսակներ, թփուտներ, ծառեր:

Տեղանքի բարդ ռելիեֆով պայմանավորված՝ ուժերի մոտեցումն օջախներին բավականին բարդ է ընթանում: Տարածքում գոյացած խիտ ծխապատ գոտուց տեսանելիությունը կտրուկ ընկել է՝ տեղանքով տեղաշարժը դարձնելով առավել վտանգավոր: Տվյալ պահի դրությամբ՝ այրվում է մոտ ընդհանուր 100 հա բուսածածկ և անտառածածկ տարածք, տեղում հրդեհաշիջման աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ենթակա ՀՓՋ-ների, Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի և էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համատեղ: Օգտագործվում են վերջիններիս տեխնիկական միջոցները, համապատասխան գույք-սարքավորումները, ջրի շարժական բաքերը, ջրցան սարքերը, ձեռքի թակիչները և այլն:

***Ուսումնական հարցերը.***

1) հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպում և իրականացում,

2) հրդեհավտանգ գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության կազմակերպում և իրականացում:

***Ուսուցանվողների գործողությունները.***

ՇՈՒ ղեկավարի տեղակալը ներկայացնում է երկրորդ փուլում ստեղծված իրավիճակը, որից հետո խնդիր է դնում մասնակիցներին՝ կազմակերպել, իրականացնել հրդեհաշիջման աշխատանքները և վտանգավոր գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումները:

ՇՈՒ մասնակիցները առաջարկում են՝

➢ գործել համաձայն «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ի և օգտագործել ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» համատեղ հրամանի պահանջների համաձայն մշակված անտառտնտեսությունների և հատուկ պահպանվող տարածքների հրդեհների արձագանքման պլաններում նշված ուժերն ու միջոցները, հրդեհաշիջման աշխատանքներում ընդգրկել նաև Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի անձնակազմին, ինչպես նաև համապատասխան բնակավայրերի կամավոր խմբերին/կազմավորումներին,

➢ ճշտել և հստակեցնել ջրի լիցքավորման հնարավոր կետերի գտնվելու վայրերը նաև ուղղաթիռ օգտագործելու դեպքում,

➢ ճշտել և հստակեցնել ջրի լիցքավորման կետերին և հրդեհի օջախներին մոտենալու երթուղիները, մոտեցման ուղիները,

➢ հրդեհաշիջման աշխատանքները՝ ըստ տարածքների, տեղամասերի իրականացնելու և ընդգրկված ուժերի միջև փոխհամագործակցությունը կազմակերպելու վերաբերյալ,

➢ լրացուցիչ ուժերի ներգրավման վերաբերյալ:

ՇՈՒ մասնակիցները իրենց մասով մասնակցում են քարտեզների, ուժերի և միջոցների բաշխման սխեմաների մշակմանը, իրականացնում են համապատասխան միջոցառումներ, ձևակերպում որոշումներ:

ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ենթակա ՀՓՋ-ները՝ փոխհամագործակցելով Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի, էկոպարեկային ծառայության աշխատակիցների և ներգրավված այլ մասնակիցների հետ՝ ըստ բաշխված տարածքների իրականացնում են հրդեհաշիջման աշխատանքներ:

Ներկայացնում են առաջարկություններ՝ հրդեհաշիջման աշխատանքներին զուգահեռ՝ վտանգավոր գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, այնուհետև ձևակերպում են որոշումներ դրանց իրականացման համար:

Մասնակիցները զեկուցում են կատարված աշխատանքների մասին՝ ըստ ոլորտների և տեղամասերի:

Ժամը 15:20-16:00-ն ՇՈՒ ղեկավարը իրականացնում է իրավիճակի խաղարկում՝ ըստ իրավիճակի զարգացման պլանի, տալիս է N 3 և N 4 միջանկյալներն ու հսկում ուսուցանվողների կողմից իրականացվող գործողությունները, այնուհետև ունկնդրում զեկույցները:

Ժամը 16:00-ից 16:10-ը իրականացվում է ՇՈՒ երկրորդ փուլի արդյունքների ամփոփում:

Ժամը 16:10-ից 16:20-ը իրականացվում է ՇՈՒ արդյունքների հակիրճ ամփոփում:

Ժամը 16:20-ին հայտարարվում է ՇՈՒ ավարտ:

**ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ, փրկարար ծառայության գնդապետ Գ. Սեդրակյան**

Հավելված № 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԼԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

*Թեման՝* «Բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների ու հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը անտառային խոշոր հրդեհի դեպքում»:

*Ուսումնական նպատակները՝*

1) ստուգել և կատարելագործել մասնակիցների ունակությունները անտառային խոշոր հրդեհի դեպքում՝ բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործում,

2) ստուգել ՀՀ Կոտայքի մարզպետի 14.05.2024թ.-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման՝ հավելված № 1 «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի, հավելված № 8 «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ի և համապատասխան այլ պլանների իրատեսությունը,

3) ստուգել «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի իրատեսությունը,

4) ստուգել ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Աղետների ռիսկի կառավարման պլան»-ի իրատեսությունը,

5) կատարելագործել կառավարման մարմինների ղեկավար կազմի հմտությունները,

6) կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների, ծառայությունների և համապատասխան կազմակերպությունների միջև:

*ՇՈՒ մասնակիցների կազմը՝*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների և բնակչության տարահանման հանձնաժողովներ,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հետևյալ վարչությունների ղեկավար կազմ՝

ա. Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն

բ. Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն

գ. Ֆինանսական վարչություն

դ. Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն

ե. Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն

զ. Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչներ,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզի պարեկային ծառայության և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներ,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար

6) ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ու Ծաղկաձորի անտառպետության ներկայացուցիչներ:

***Անցկացման ժամանակը***՝ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև 16:20-ը:

***Անցկացման վայրը***՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճ (հասցե՝ ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

## ՇՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

| Ժամանակը | | Ուսումնական հարցերը | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|---|---|---|
| օպերատիվ | աստղաբաշխական | | Ղեկավարի | Ուսուցանվողների |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **I փուլ - «Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում: Հետախուզության կազմակերպում, իրավիճակի գնահատում և հրդեհի արձագանքման կազմակերպում».**<br>*Փուլի տևողությունը՝*<br>*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև աշխատանքների ավարտը,<br>*աստղաբաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև 13:00-ն: | | | | |
| 08:30-ից մինչև աշխատանքների ավարտը | 08:30-10:00 | Մասնակիցների ազդարարում, հավաք և խնդրադրում: | Տալիս է կարգադրություն մասնակիցների ազդարարում և հավաք իրականացնելու վերաբերյալ:<br>Վերահսկում է ազդարարման և հավաքի գործընթացը:<br>Ընդունում է զեկույց՝ խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Ծանոթացնում է ստեղծված իրավիճակին, այնուհետև խնդիր է դնում մասնակիցներին՝ անտառային խոշոր հրդեհների դեպքում իրավիճակի բացահայտման, հետախուզության, հրդեհի արձագանքման, հրդեհաշիջման աշխատանքների, ինչպես նաև բնակչության, կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: | Մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան ներկայանում են մարզպետի աշխատակազմի վարչական շենք և մասնակցում խորհրդակցությանը:<br>Մասնակիցները իրենց հերթին իրականացնում են ենթակա անձնակազմի ազդարարում և հավաք մշտական աշխատավայրերում:<br>ՇՈՒ ղեկավարման շտաբի պետը զեկուցում է մարզպետին խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին:<br>Մասնակիցների կողմից՝<br>- հրդեհաշիջման, բնակչությանը, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ առաջարկում են՝ գործողության մեջ դնել՝ ՀՀ Կոտայքի մարզպետի 14.05.2024թ.-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման՝ հավելված № 1 «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը, հավելված № 8 «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ը, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» համատեղ հրամանի պահանջների համաձայն մշակված՝ «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ը՝ օգտագործելով առկա ուժերն ու միջոցները: Անհրաժեշտության դեպքում համապատասխան համայնքների բնակչությանը ստեղծված իրավիճակի և վարվելակերպի կանոնների մասին իրազեկելու նպատակով օգտագործել ազդարարման էլեկտրաշչակները, հրդեհաշիջման աշխատանքներում ընդգրկել նաև Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի անձնակազմին, ինչպես նաև համապատասխան բնակավայրերի կամավոր խմբերին/կազմավորումներին. Համաձայն ստեղծված իրավիճակի՝ ըստ գործունեության ոլորտների, մասնակիցները առաջարկություններ են ներկայացնում հետախուզության, հրդեհաշիջման, բնակչությանը և կենդանիներին ու նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: |
| 08:30-ից մինչև աշխատանքների ավարտը | 10:00-11:30 | Հրդեհի արձագանքման և հետախուզությա ն կազմակերպում, իրականացում, | Տալիս է կարգադրություն՝ հրդեհի արձագանքման և հետախուզության կազմակերպման վերաբերյալ: | Ճշտում են հրդեհի մակերեսը և համապատասխան միջոցառումների համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները: Համապատասխան աշխատանքների, միջոցառումների իրականացման համար ստեղծում են աշխատանքային խմբեր: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրավիճակի գնահատում: | | Հետախուզության տվյալների հիման վրա գնահատում են իրավիճակը, որոշում են՝<br>- աշխատանքների ծավալը, կատարման կարգը և հաջորդականությունը.<br>- հրդեհաշիջման աշխատանքների իրականացմանը խոչընդոտող գործոնները,<br>- ուժերի և միջոցների վիճակը, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժերի, ինժեներական տեխնիկայի ներգրավումն ու տեսակները,<br>- համաձայնեցնում են աշխատանքների կատարման ժամանակը, ներգրավված ուժերի և խմբերի/կազմավորումների գործողությունները,<br>- որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև:<br>Մասնակիցները՝ ըստ ոլորտների, ներկայացնում են զեկույցներ՝ հետախուզության արդյունքների, կատարված աշխատանքների վերաբերյալ: ՇՈՒ ղեկավարը ունկնդրում է զեկույցները: |
| | 11:30-12:30 | Տրվում է N 1 և N 2 միջանկյալները | Ունկնդրում է ուսուցանվողների զեկույցները: | Իրականացնում են միջոցառումներ համաձայն միջանկյալների և զեկուցում կատարված աշխատանքների վերաբերյալ: |
| | 12:30-13:00 | Առաջին փուլի ամփոփում | Ունկնդրում է ուսուցանվողների զեկույցները: Իրականացնում է առաջին փուլի ամփոփումը | Մասնակիցները զեկուցում են առաջին փուլում կատարած աշխատանքների մասին: |
| | 13:00-14:00 | Ընդմիջում | | |
| **II փուլ - «Հրդեհաշիջման աշխատանքների, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որոշումների ձևակերպում»:**<br>*Փուլի տևողությունը՝*<br>*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև աշխատանքների ավարտը,<br>*աշխատաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև 16:20-ը: | | | | |
| | 14:00-14:50 | Հրդեհաշիջման աշխատանքների իրականացում: | Խնդիր է դնում իրականացնել հրդեհաշիջման աշխատանքներ: Ունկնդրում է ուսուցանվողների զեկույցները: | ՇՈՒ մասնակիցները առաջարկում են՝<br>- գործել համաձայն ՀՀ Կոտայքի մարզպետի 14.05.2024թ.-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 20-ի № 405-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին» № 209-Ա որոշման՝ հավելված № 1 «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ը, հավելված № 8 «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլան»-ը, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» համատեղ հրամանի պահանջների համաձայն մշակված՝ «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ը՝ օգտագործելով առկա ուժերն ու միջոցները,<br>- հրդեհաշիջման աշխատանքներում ընդգրկել նաև Մեղրաձորի կամավոր հրշեջ-փրկարարական հենակետի անձնակազմին, ինչպես նաև համապատասխան բնակավայրերի կամավոր խմբերին/կազմավորումներին,<br>- ճշտել և հստակեցնել ջրի լիցքավորման հնարավոր կետերի գտնվելու վայրերը նաև ուղղաթիռ օգտագործելու դեպքում,<br>- ճշտել և հստակեցնել ջրի լիցքավորման կետերին և հրդեհի օջախներին մոտենալու երթուղիները, մոտեցման ուղիները,<br>- հրդեհաշիջման աշխատանքները՝ ըստ տարածքների, տեղամասերի իրականացնելու և ընդգրկված ուժերի միջև փոխհամագործկցությունը կազմակերպելու վերաբերյալ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | լրացուցիչ ուժերի ներգրավման վերաբերյալ: ՇՈՒ մասնակիցները իրենց մասով մասնակցում են քարտեզների, ուժերի և միջոցների բաշխման սխեմաների մշակմանը, իրականացնում են համապատասխան միջոցառումներ, ձևակերպում որոշումներ: Զեկուցում են կատարված աշխատանքների մասին: |
| | 14:50-15:20 | Հրդեհավտանգ գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքների պաշտպանությա ն կազմակերպում և իրականացում: | Խնդիր է դնում իրականացնել հրդեհավտանգ գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումներ: ՈՒնկնդրում է ուսուցանվողների զեկույցները: | Ներկայացնում են առաջարկություններ՝ հրդեհաշիջման աշխատանքներին զուգահեռ՝ վտանգավոր գոտում գտնվող մարդկանց կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, այնուհետև ձևակերպում են որոշումներ դրանց իրականացման համար: Զեկուցում են կատարված աշխատանքների մասին՝ ըստ ոլորտների և տեղամասերի: |
| | 15:20-16:00 | Տրվում է N 3 և N 4 միջանկյալները | ՈՒնկնդրում է ուսուցանվողների զեկույցները: | Իրականացնում են միջոցառումներ համաձայն միջանկյալների և զեկուցում կատարված աշխատանքների վերաբերյալ: |
| | 16:00-16:10 | Երկրորդ փուլի ամփոփում | ՈՒնկնդրում է ուսուցանվողների զեկույցները: Իրականացնում է երկրորդ փուլի ամփոփում: | Մասնակիցները զեկուցում են երկրորդ փուլում կատարած աշխատանքների մասին: |
| | 16:10-16:20 | ՇՈՒ արդյունքների ամփոփում | Անցկացնում ՇՈՒ արդյունքների հակիրճ ամփոփում, մատնանշում ուժեղ և թույլ կողմերն ու տալիս գնահատական: | Զեկուցում են ՇՈՒ ընթացքում կատարած աշխատանքների մասին: |
| | 16:20 | ՇՈՒ ավարտ | Հայտարարում է ՇՈՒ ավարտ | |

**ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ, փրկարար ծառայության գնդապետ** **Գ. Սեդրակյան**

**Հավելված № 5**
**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի**
**2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման**

**ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ**
**2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ**

**Թեման՝** «Բնակչության, նյութական արժեքների և կենդանիների պաշտպանության միջոցառումների ու հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը անտառային խոշոր հրդեհի դեպքում»:

| Միջանկյալների տրման ժամը | Միջանկյալների բովանդակությունը | Ով է հանձնում | Ում է հանձնում |
|---|---|---|---|
| **I փուլ - «Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում: Հետախուզության կազմակերպում, իրավիճակի գնահատում և հրդեհի արձագանքման կազմակերպում».**<br>*Փուլի տևողությունը՝*<br>*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև աշխատանքների ավարտը,<br>*աստղաբաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 08:30-ից մինչև 13:00-ն: | | | |
| ժամը 11:30-12:30 | **Միջանկյալ N 1**<br>ՀՀ ՆԳՆ ՓԾ «911» ահազանգման կենտրոնում ստացվում են ահազանգեր այն մասին, որ նկատվում են հրդեհի տարբեր օջախներ, որոնք հասել են Մարմարիկ գյուղի տարածք (նաև մշակովի հողատարածքներ) և հարակից գտնվող մի քանի հանգստյան տներին ու ճամբարներին: Գյուղ բնակչության և հանգստյան տներում, ճամբարներում գտնվող քաղաքացիների շրջանում առաջացել է խուճապային իրավիճակ: | ՇՈՒ խաղարկման խումբ | ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ:<br>ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզի պարեկային ծառայության և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներ:<br>ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի՝ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն:<br>ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ու Ծաղկաձորի անտառպետության ներկայացուցիչներ: |
| | **Միջանկյալ N 2**<br>Խումապային իրավիճակ է առաջացել նաև Ծաղկաձոր քաղաքում, մի շարք ավտոճանապարհներում առաջացել են խցանումներ և ավտովթարներ: Քաղաքը հայտնվել է ծխի մեջ:<br>Տարբեր հատվածներում հայտնաբերվել են հրդեհի տարբեր օջախներ, վարկածներ կան, որ իրականացվում են միտումնավոր հրկիզումներ: | ՇՈՒ խաղարկման խումբ | ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար:<br>ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզի պարեկային ծառայության և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներ: |
| **II փուլ - «Հրդեհաշիջման աշխատանքների, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որոշումների ձևակերպում»:**<br>*Փուլի տևողությունը՝*<br>*օպերատիվ ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև աշխատանքների ավարտը,<br>*աստղաբաշխական ժամանակով* - 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ից մինչև 16:20-ը: | | | |
| 15:20-16:00 | **Միջանկյալ N 3**<br>ՀՀ ՆԳՆ ՓԾ «911» ահազանգման կենտրոնում ստացվում է ահազանգ այն մասին, որ անտառի և հարակից տարածքներում գտնվող պատմամշակութային արժեքներ ներկայացնող հատվածները (խաչքարեր, եկեղեցիներ) գտնվում են կրակին մոտ և հնարավոր է վնասվեն: Վտանգավոր, ծխապատ գոտում են հայտնվել նաև զբոսաշրջիկների արշավախմբեր: Առկա են վնասվածքներ ստացած զբոսաշրջիկներ: | ՇՈՒ խաղարկման խումբ | ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ:<br>ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի՝ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, կրթության, մշակույթի և սպորտի վարչություն: |
| | **Միջանկյալ N 4**<br>Այրվում է նաև Ծաղկաձորի և Արզականի (Աղվերան) անտառածածկ հատվածների միջնամասում գտնվող խոտածածկ/բուսածածկ տարածքը, որտեղից էլ հնարավոր է տարածվի դեպի Արզականի անտառածածկ հատված: Նույն հատվածի հարևանությամբ հայտնաբերվել են մանր և խոշոր եղջերավոր կենդանիներ: | ՇՈՒ խաղարկման խումբ | ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ:<br>ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ու Ծաղկաձորի անտառպետության ներկայացուցիչներ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն: |

**ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ, փրկարար ծառայության գնդապետ** **Գ. Սեդրակյան**

Հավելված № 6
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի № 382-Ա որոշման

# ՍԽԵՄԱ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ




Պայմանական նշաններ
- հրդեհի օջախներ
- ծխապատ գոտի
- տարածվող հրդեհի ուղղություն

ՇՌԻ ղեկավարման շտաբի պետ, փրկարար ծառայության գնդապետ Գ. Սեդրակյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 սեպտեմբերի 2025 թվականի № 383-Ա**

### ԹԵՀՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՒՌՆՈՒՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի մոտ 2025 թվականի սեպտեմբերի 22-ին *Թեհմինե Հայրապետյանի* հետ անցկացրած հարցազրույցը՝ **որոշում եմ.**

1. ***Թեհմինե Վաղինակի Հայրապետյանին*** 2025 թվականի սեպտեմբերի 22-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 19-ի *«Դավիթ Կարապետյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին»* № 343-Ա որոշման 3-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 22**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 սեպտեմբերի 2025 թվականի № 384-Ա**

## ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով *Հայկ Մկրտչյանի* 2025 թվականի սեպտեմբերի 22-ի № Ն/1188-2025 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ չորս աշխատանքային օր՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 9-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 23**
**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 սեպտեմբերի 2025 թվականի № 385-Ա**

**ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Ստեփան Բաղդասարյանի* 2025 թվականի հուլիսի 29-ի № Ն/975-2025 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ստեփան Բաղդասարյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 14 աշխատանքային օր՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 30-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 24**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 սեպտեմբերի 2025 թվականի № 386-Ա**

## ԱՆԱՀԻՏ ՄԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Անահիտ Մալյանի* 2025 թվականի սեպտեմբերի 23-ի № 68 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անահիտ Մալյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը ներառյալ:

2. ***Անահիտ Մալյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Ռոզա Մարգարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 24**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 սեպտեմբերի 2025 թվականի № 387-Ա**

## ԱՐԱՅԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Արայիկ Ոսկանյանի* 2025 թվականի սեպտեմբերի 23-ի № **22** դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Արայիկ Ոսկանյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 8-ը ներառյալ:

2. ***Արայիկ Ոսկանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Անահիտ Եղիազարյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Անահիտ Եղիազարյանին*** և «Արգելի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Արտեմ Պետրոսյանին՝*** ապահովել «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արգելի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Արտեմ Պետրոսյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 24**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 սեպտեմբերի 2025 թվականի № 388-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի № 507-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի *«Նարինե Աբրահամյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* № 507-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Անուշ Իգիթի Հովհաննիսյանին***:»:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի սեպտեմբերի 24**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 սեպտեմբերի 2025 թվականի № 389-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի № 1 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 17-րդ կետում ***«Թամարա Շաբոյան»*** բառերը փոխարինել ***«Վարդանուշ Ղուկասյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 25**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 սեպտեմբերի 2025 թվականի № 390-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 29-ի № 2881-Ա հրամանը և 2024 թվականի նոյեմբերի 29-ի № ԴԽ//38990-2024 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2025 թվականի չորրորդ եռամսյակում* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի *«Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի № 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»* № 03-Ն հրամանով հաստատված՝ իրավական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, մեկամսյա ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 26**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 26-ի № 390-Ա որոշման

**2025 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| Հ/հ | Համայնքի անվանումը | Ժամանակահատվածը | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|
| | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Ազգանուն, անուն |
| 1 | 2 | 3 | 5 | 6 |
| 1 | Գառնի | նոյեմբեր 2022-հոկտեմբեր 2025 | ղեկավար՝<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ<br>անդամներ՝<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ<br>-ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>-ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ | *Ալեքսանյան Հարություն*<br><br>*Սահակյան Սամվել*<br><br>*Գասպարյան Մայրանուշ*<br><br>*Ստեփանյան Համլետ*<br><br>*Վարդանյան Հրաչյա*<br><br>*Հակոբյան Արթուր*<br><br>*Ավետիսյան Գուրգեն*<br><br>*Թումյան Կամո*<br><br>*Արփաշյան Շավարշ* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2025 թվականի № 391-Ա**

## ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Անահիտ Ստեփանյանի* 2025 թվականի սեպտեմբերի 26-ի № 107 դիմումը՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան № 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անահիտ Ստեփանյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից չորս աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը ներառյալ:

2. ***Անահիտ Ստեփանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան № 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի տեղակալ ***Լաուրիկ Ալոյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ԱԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 29**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2025 թվականի № 392-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի № 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 7-րդ կետում ***«Քրիստինե Մանուկյան»*** բառերը փոխարինել ***«Սվետլանա Բաղալյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի № 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 30**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2025 թվականի № 393-Ա**

## ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի № Ն/1249-2025 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ստեփան Բաղդասարյանին*** 2025 թվականի հոկտեմբերի 1-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Չարենցավանի № 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի հավակնորդների հետ հարցազրույց անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. ***Ստեփան Բաղդասարյանի*** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված ***«TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 L»*** մակնիշի ***827 CZ 61*** ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի սեպտեմբերի 30**
**ք. Հրազդան**